

EDN: SFMZHC

2022 թվականը ծանրագույններից էր հայ ժողովրդի համար: Մեծ թվով մարդկային ու տարածքային կորուստ ունեցանք: Թշնամին ներխուժել և տիրացել է ռազմավարական կարևոր բնակետերի: Ունենք նաև տեղահանվածներ ու կյանքի բնականոն ռիթմից դուրս նետված շատ ընտանիքներ: Ամենացավալին ու դժվար վերականգնվողը պարտվածի հոգեվիճակն է, որ շատերի մոտ տիրապետող է դարձել: Որքան էլ ինքներս մեզ խաբենք, որքան էլ փոփուկ բազմոցների վրա նստած թշնամու վրա հոխորտանք, սպառնանք ու ավարայրներից վկայակոչումներ անենք, պարտվածի, ընկճվածի վիճակում ենք, շփոթված ու անօգնական, ամենուրեք ու բոլորի մոտ օգնություն հայցող հոգեվիճակը տիրապետող է դարձել: Աստված իմ, այս ո՛ր հասանք: Ժամանակն է, որ ինքներս մեզ այլևս չխաբենք, այլ ավելի ռացիոնալ մտածենք, սթափվենք թմբիրից, քանզի այս վիճակից դուրս գալու այլ ճանապարհ չի եղել և չկա: Դրա համար անչափ կարևոր հիմնադրույթներ կան, որոնց մասին այսօր ուզում եմ բարձրաձայնել:

1. Ստեղծված կացությունը շտկելուն ուղղված առաջին քայլով պիտի մանրամասն և իրատեսորեն հաշվեքնենենք ինչ և ինչի հույս ունենք: Այսինքն՝ եղածի և ունենալիքի ճշգրիտ **գույքագրում պետք է կատարվի:**
2. Այս վիճակը հար և նման է հիվանդության, որը հաղթահարելու համար նախ և առաջ այն պետք է **ախտորոշել:**
3. Խորագնին **ուսումնասիրել** բոլոր արտաքին, ներքին և հոգեբանական **գործոնները**, որոնք հանգեցրին այս տխուր կացությանը:
4. **Վերլուծել** այդ գործոնների միջև եղած կապերն ու **օրինաչափությունները**, վեր հանել **դրանց պատճառները** և անսակարկ զգոնությամբ գնահատել դրանք:
5. Մասնագիտական ժամանակակից մոտեցումներով վեր հանել ու **հասկանալ** հասարակություն-պետություն, պետություն-անհատ, անհատ-անհատ կապերը, տարբեր սերունդների միջև գործող իրավահոգեբանական, կրթամշակութային, ձգտում-երազանքների ամբողջությունը, դրան նպաստող ու հակադրող բոլոր գործոնները և դրանք կատարյալ դարձնելու միջոցները:

Կարևոր այլ գործոններ ու բաղադրիչներ էլ կան, սակայն բավարարվենք այսքանով և ներկա կացությունը հաղթահարելու համար առաջնորդվենք «քիչ խոսել-շատ անել» սկզբունքով: Հատկապես որ վերջին երեք-չորս տարիներին «շատ խոսել-քիչ կամ ոչինչ չանելն» ավելի գերակա է դարձել և հասցրել այս վիճակին: Դրանց մասին նշենք համառոտ:

1. Հայոց վերջին ավելի քան երկու հազար տարվա պատմական երթում անկախության առումով որոշ ձեռքբերումներ ենք ունեցել: Առհավատցյան՝ Արշակունյաց, Բագրատունյաց, Չաքարյանների, Խամսայի մելիքությունների, Հակական լեռնաշխարհից դուրս Կիլիկիայի, 1918 թվականի մայիսյան, 1920 թվականի նոյեմբերյան և վերջապես 1990 թվականի սեպտեմբերյան պետականությունները: Մակայն դրանք սոսկ կարճատև դրսևորումներ եղան և միջնադարյան ու նոր ժամանակների դաժան փորձությունները հայ ժողովուրդն հաղթահարեց պետականության բացակայության դժվարագույն պայմաններում: Ու թեև դրանք անխնա ճնշում ու ճզմում էին, բայց քանի որ հայ մարդը հոգեբանորեն եղավ ու մնաց պետականության գաղափարի անսասան կրողը, չկարողացան այն արմատախիլ անել: Ուստի պատահական չի, որ ամեն անգամ չնչին առիթի դեպքում նա ոտքի էր կանգնում ու նոր պետականություն կերտում: Իսկ երբ այդ նվազագույն հնարավորությունն էլ չէր ունենում, ապա պետականության գաղափարը ձևում, շունչ ու հոգի էր տալիս թղթի վրա. հեռավոր Հնդկաստանում թերթ էր հրատարակում, «Որոզայթ Փառացի» ու «Տետրակ, որ կոչի հորդորակի» տեսքով սահմանադրության նախատիպեր երկնում, «Ռֆայցյան» ու «Մոսկովյան» անուններով Հայրենիքի փրկության նախագծեր մտածում, զենքը ձեռքին դոնկիխոտյան ազգային-ազատագրական-ֆիդայական պայքարի դուրս գալիս: Ընդ որում, բաղձալի հաղթանակին հասնելու համար երբեք ոչինչ չէր խնայում, ուղղակի ուժերն էին խիստ անհավասար:

2. 1990-ին ցանկալի անկախությունը մեզ նվիրեցին: Իսկ մենք ինչ արեցինք: Փոխանակ որպես բարձրագույն արժեք պետականությունը գնահատելու, համախմբվելու և այն ավելի հզորացնելու, սկսեցինք վայրենաբար թալանել այն: Ընդ որում, թալանվեցին ոչ միայն նյութական, այլև հոգևեր-մշակութային, կրթական ու բարոյահոգեբանական բոլոր կարողությունները: Արդյունքում

աննախադեպ աղքատացավ ամբողջ երկիրը, նախկին պատվարժան ու հպարտ հայաստանցի հայր դարձավ խեղճ, թույլ և որդեգրեց ուզվորի նվաստ կեցվածք: Ու չնայած մեծ զոհողությունների գնով 1991-1994 թթ. պատերազմը հաղթեցինք, սակայն շարքային հայ մահկանացուն ամենուր թալանի արդյունքում նորաթուխ օլիգարխների լկտի պահվածքը տեսնելով՝ սկսեց ելք որոնել օտար ափերում: Կրկին թափ առավ հայոց կործանման ամենահիմնական գործոն արտագաղթը:

3. Հաջորդեցին թվացյալ հաղթողի կեղծ հոգեկերտվածքը և դրա անմիջական արդյունք-հետևանք համատարած հանգստությունն ու հասարակության հետագա նյութական բևեռացումը: Այլևս անհաղթահարելի անդունդ ձևավորվեց ապօրինի միջոցներով անչափելի հարստության տեր դարձած և իրեն էլիտա համարող (վստահաբար նրանց մեծ մասն անգամ բառի իմաստը չգիտի) փոքրաթիվ մասի և մի կերպ օրվա հացը վաստակող մեծամասնության միջև: Ամբողջ ժողովրդին «տեղավորեցին» արհեստական էյֆորիայի մեջ, թե իբր անպարտելի ենք, թե իբր մեր բանակը «Կովկասյան վագր» է, թե իբր թշնամին եթե փորձի հարձակվել նոր ու ցավալի կորուստներ կունենա և այլն: Այսինքն, ամենուրեք զբաղված էինք ինքնախաբեությամբ և պատահական չէր, որ հայտնվեցինք ներկ տխուր վիճակում:

4. Հնուց է գալիս՝ հաղթողը վերցնում է այնքան, որքան ուզում է, իսկ պարտվողը պահպանում է այնքան որքան կարողանում է: Իսկ մենք հեևություններ անելու փոխարեն այն ու ձախ դիմում ենք բոլորին ու աջակցություն ակնկալում: Ամենացավալին այն է, որ օրեցօր վիճակը վատանում է, գույներն ավելի են մգանում ու խտանում: Կառաջնորդվեմ այն տրամաբանությամբ, որ իրավիճակի նկարագրությանը եթե չեն հաջորդում ելքերի որոնումն ու մատնացույց անելը, ապա դա ժամանակի գուր կորուստ կլինի: Արդ, ինչ է հարկավոր անել այս պահին: Ցանկանում եմ կոչ-հորդորով դիմել համայն հայությանը.

1. Անկախ նախասիրություններից և մի կողմ թողնելով դրանք՝ մեր իշխանությունները պետք է խելքի գան, դառնան այն հիմնակետը, որի շուրջ համախմբվեն ու հանուն հայրենիք բռնեցքվեն հասարակության բոլոր շերտերն ու խավերը:
2. Ընդդիմադիրները հնար գտնեն և գոնե առժամանակ հաղթահարեն հայ հասարակության տարաբևեռ և անհանդուրժող վիճակը:
3. Հայաստանյայց առաքելական եկեղեցին, որ ավելի քան 1700 տարի եղել մեր պետականության սատարողն ու ջատագովը, իսկ երբեմն էլ՝ կրողն ու փոխարինողը, այսօր մեղմ ասած այնքան էլ համերաշխ չեն: Կոչ եմ անում իշխանություններին և եկեղեցուն, որ երկուստեք բոլոր ջանքերը ներդնեն և վերջ տան պետություն-եկեղեցի մերօրյա շարունակվող այդ անհաշտությանը: Ասել է՝ վերջ դնեն աշխարհիկ և հոգևոր դաշտերում առկա տարաձայնություններին:
4. Վերջին տասնամյակների խորապատկերում ամենացածր մակարդակում են հայտնվել և վտանգված են միմյանց լրացնող, միմյանցով պայմանավորված Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները, հետևաբար նաև մեր ազգի համար օդի նման անհրաժեշտ ազգապահպանության հիմնախնդիրը: Դիմում եմ աշխարհասփյուռ հայությանը և կոչ եմ անում առժամանակ խորը անթեղել ամեն տեսակի վիճելի հարցերն ու նեղացածությունը, մեջք մեջքի տալ և հաղթահարել այս ճգնաժամը:

Ավելացնեմ, որ ձևավորման պահից համայն հայության և մեր սփյուռքի, որ նույն եռաբլուրն է, միայն ցրված տարածության ու ժամանակի մեջ, հայացքը միշտ սևեռված է եղել Արարատամերձ հայրենի եզերքներին: Բոլոր սփյուռքահայերի «Մեծ երագի» հանգրվանն ու մարմնավորումը դարձյալ եղել և մնում է Հայաստանը: Ակնհայտ է, որ այսօր նոր աշխարհակարգ ձևավորելու նպատակով ընթացող համաշխարհային հիբրիդային պատերազմի և արդիական գերզենքերի պայմաններում հրթիռ ու ռումբ կարող է պայթել ցանկացած պահի երկրագնդի ցանկացած մասում: Այնպես որ, մերօրյա ավելո՞ծ ծովում լողացող նավում գտնվող համայն հայության համար որպես փարոս, որպես փրկարար խարիսխ դարձյալ կարող լինել միմիայն Հայաստանը: Իսկ նա այսօր վիրավոր է, թուլացած: Իրենց նախորդների նման մեր թշնամին կրկին արյան հոտ է առել ու անում է ամեն հնարավորը ոտնատակ տալու, պետականությունից զրկելու և հայությանը պատմության ասպարեզից ընդմիշտ հեռացնելու համար: Այս իրավիճակում որևէ մեկին թող չթվա, որ եթե ինքը Արգենտինայում է կամ Ավստրալիայում, ուրեմն ապահովագրված է այդ ամենից: Չէ, նման բան չկա, մի քիչ ավել մի քիչ պակաս վտանգված ենք բոլորս ու բոլորիս նավը: Այս իրավիճակից ելնելով համայն հայությանը կոչ եմ անում սթափվել, ամուր կառչել իրենց արմատներին, անկախ գտնվելու վայրից, ունեցած հնարավորություններից հասկանալ, որ առանց փարոսի ու խարիսխի Հայոց նավը կկորցնի կառավարումը և անդառնալիորեն կկործանվի համաշխարհային ավելո՞ծ օվկիանոսում: Արդ ամուր բռնենք միմյաջ ձեռքերից, դիմագրավենք նաև այս փորձությունը և վստահաբար ապագան մերը կլինի:

15/02/2023